

ՀՈԳԵՎՈՐ ԿՅԱՆՔ

ՔՐԻՍՏՈՍ ՀԱՐՅԱԿ Ի ՄԵՌԵԼՈՑ ՕՐՀՆՅԱԼ Ե ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԻՍՏՈՍԻ

Մարտի 21-ին Հայ առաքելական եկեղեցին նշեց Սուրբ Հարության տոնը: Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոնը կոչվում է նաև Ջատիկ, որը նշանակում է գատում, բաժանում, հեռացում մեղքերից և վերադարձ առ Աստված: Ջատիկը Հայ առաքելական եկեղեցու 5 տաղավար տոներից մեկն



իզուր է մեր քարոզությունը, իզուր է և ձեր հավատը» (Ա. Կորնթ. 15:13-14):

Ս. Հարության տոնին հավատացյալները միմյանց ողջունում են «Քրիստոս յարեալ ի մեռելոց» ավետիսով, պատասխանում «Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի»:

Ջատիկի տոնին հավատացյալները ձու են ներկում: Ներկված ձուն համարվում է Հարության և նոր կյանքի խորհրդանշան: Կարմիր գույնը խորհրդանշում է խաչյալ Հիսուսի կենդանարար արյունը, որ թափվեց մարդկության փրկության համար: Ըստ Ս. Գրիգոր Տաթևացու «Միայն Ջատիկն ենք ձու ներկում, որովհետև ձուն օրինակ է աշխարհի», և ինչպես իմաստուններն են ասում, «Իրսի կեղևը նման է երկնքին, թաղանթը օդին, սպիտակուցը ջրին, դեղնուցն էլ երկիրն է: Բսկ կարմիր գույնը խորհրդանշում է Քրիստոսի արյունը: Եվ մենք կարմիր ձուն մեր ձեռքերի մեջ առնելով՝ հոչակում ենք մեր փրկությունը»:

Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոնը Հայ եկեղեցին նշում է հիսուն օր շարունակ մինչև Հոգեգալստյան տոն (Պենտեկոստե): Այս ընթացքը կոչվում է Հինանց շրջան կամ Հինունք, որը ծագում է «հիսունք» բառից: Հինանց շրջանի քառասուն օրերը Հարուցյալ Քրիս-



և գորագած առաքյալները վկայեցին Քրիստոսին ամբողջ աշխարհով:

Ջատիկը սկիզբ է առել հրեաների կողմից նշվող Պասեք տոնից, որի ժամանակ, ըստ քրիստոնեական դավանանքի, 1-ին դարում Երուսաղեմում խաչվել է հարություն է առել Հիսուս Քրիստոսը: Պասեքը հրեաների կողմից ինչպես նախկինում,



խանջան էր Հիսուս Քրիստոսի (Գառն Աստծո) կամովին մահվան ընդունման և իր արյան հեղման՝ հանուն մարդկության փրկության: Քրիստոնեական եկեղեցիները Հիսուս Քրիստոսի հարությունը տոնում են որպես գատիկ, որովհետև ըստ քրիստոնեական ուսմունքի Քրիստոսն է հավիտենական այն գոհը կամ պատարագը, որի միջոցով մարդն ստանում է մեղքերի թողություն, ապա կյանք և հարություն: Պողոս առաքյալը Հիսուսին այդպես էլ կոչում է գատիկ, «...քանզի Քրիստոս մեր գատիկը, մորթվեց...»:

է: Հիսուս Քրիստոսի խաչելությունից և մահից հետո՝ երեկոյան, բարեպաշտ մարդիկ Նրա մարմինը իջեցրին խաչից և դրեցին վիմափոր գերեզմանի մեջ փակելով մեծ քարով: Երեք օր հետո՝ կիրակի առավոտյան, յուրաքեր կանայք՝ Մարիամ Մագդաղենացին, Հակոբի մայր Մարիամը և Սողոմեն, գնացին գերեզման անուշաբույր յուղերով օծելու Քրիստոսի մարմինը, սակայն զարմանքով տեսան, որ քարայրի մուտքի քարը հեռացված է, իսկ գերեզմանը՝ թափուր: Մինչ նրանք տարակուսում էին, երևացին երկու հրեշտակ և ասացին. «Ինչու եք ողջին մեռելների մեջ փնտրում: Այստեղ չէ, այլ Հարություն առավ» (Լուկ. 24:5-6):



տոսի՝ աշակերտներին երևալու և Աստծո արքայության մասին վկայություններ տալու հիշատակությունն են (Գործք 1:3), իսկ վերջին տասն օրերը նվիրված են Քրիստոսի Համբարձմանը:

Հինանց շրջանն ավարտվում է Հոգեգալստյան տոնով: Համբարձումից տասն օր հետո, ըստ Քրիստոսի խոստման, առաքյալների վրա իջավ Աստծո Ս. Հոգին,

այնպես էլ այսօր տոնվում է ի նշան եզրափակման գերությունից ազատագրման և մասնավորապես Հին կտակարանում նկարագրվող այն դրվագի, երբ Աստված նոխազի արյան միջոցով գատեց իր ժողովրդին եզրափակների վրա ուղարկված աղետից անդրանիկ զավակների կոտորածից: Համաձայն քրիստոնեական ուսմունքի այդ իրադարձությունը նա-

Ռոստովի մարզի բոլոր գործող Հայ առաքելական եկեղեցիներում առավոտյան կատարվեց ժամերգություն, Սևրաստանի արարողություն, ապա մատուցվեց ս. Պատարագ: Պատարագից հետո հավատացյալներին մատուցվեց մատար, այնուհետև համերգային ծրագրով հանդես եկան Ռոստովի պարային համույթները, երայթ ունեցան ստեղծագործական խմբեր, անհատ կատարողներ:

ՄԵՐԸ ԿՓՐԿԻ ԱՇԽԱՐՀԸ



ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ, ՕՍԵԹՈՒՀԻ ԱՐԻՆԱ

Այս օրերին հանդիպեցի մի մարդու, որի մասին չեմ կարող չպատմել: Հոգու պարսք ունեցա անպայման մեր ընթերցողին ներկայացնել Գագիևա Արինա Կարենային, որի մարդասիրական այս քայլը հիացրեց ոչ միայն ինձ: Երան հանդիպեցի Ռոստովի ուռուցքաբանական հիվանդանոցում: Լեռնուհու գեղեցիկ դիմագծերով, երիտասարդ մի կին, մեծ հոգատարությամբ, խնամում էր վիրահատարանից հիվանդասենյակ տեղափոխված հիվանդին: Զրուցում եմ նրա հետ:

Նրանք շուտով դուրս կգրվեն և կմեկնեն իրենց մեծ աշխարհի իրենց անկյունը Հարավային Օսեթիա, քաղաք Ցխենվալը: Հայուհին և օսեթուհին պայքարեցին և

– Ես շատ երջանիկ եմ, որ կարողացա օգնել մեկին, որը ուներ դրա կարիքը: Նաև ծանոթացա շատ հայերի հետ, որոնք դարձան իմ ընտանիքն ու հարազատները: Ես ցանկանում եմ իմ անսահման խոնարհումը բերել այս բժշկական կենտրոնի հոգատար ու բանիմաց բժիշկներին, բուժանձնակազմին: Նաև շնորհակալություն հայտնել մեր երկրի նախագահին Անատոլի Իլյիչին, Հարավային Օսեթիայում հայ համայնքի ղեկավարին պրն Վադիմ Շադյանին, ձեռնարկության ղեկավար Դուբեն Ինային և էլի շատ շատերին: ...Մի քանի օրից նրանց կձանապարհենք Օսեթիա: Հնորհակալություն, Արինա:

– Ինչպես էր հայտնվել այստեղ, Արինա:
– Անհրաժեշտության բերումով... Ապրում եմ Ցխենվալի քաղաքում, իմ վեց զավակների ու ամուսնու հետ: Օրերից մի օր ծանոթացա մի շատ բարի և ազնիվ հայուհու հետ: Շուտով ես ու Ադուհիկը մտերմացանք: Մի օր էլ լսում եմ, որ Ադուհիկը ծանր հիվանդ է: Նրան ոչ լավ ախտորոշմամբ տեղափոխում են Դոնի Ռոստով վիրահատվելու: Եվ քանի որ, ես մտնիկից գիտեի այդ ընտանիքի ոչ բարվոք կենցաղն ու հնարավորությունները որոշեցի օգնել... ինչ գնով էլ լինի:
– Միբեկի Արինա, իսկ ինչպե՞ս դա ձեզ հաջողվեց:
– Տասնյակ դրներ ծեծեցի: Շուտով որոշակի գումար հավաքվեց: Մի շաբաթ

ՄԵՐԸ ԿՓՐԿԻ ԱՇԽԱՐՀԸ

անց ես և Ադուհիկը գնացքով ժամանեցինք Ռոստով, որտեղ մեզ դիմավորեցին նույնպես բարեկամ մարդիկ: Վիրահատություն անցրեց շատ բարեհաջող: Պարզվեց, որ ամեն ինչ կարևոր է եղել հիվանդի կյանքը փրկելու համար:
...Այսօր ապրիլի 24-ին, նրանց Ռոստովում գտնվելու 15-րդ օրն է: Կրկին այցելեցի նրանց հիվանդանոց: Պարզվեց, որ ամեն բան բարեհաջող ընթացքի մեջ է:

հաղթեցին... Կյանքը շարունակվում է. և կշարունակվի աշխարհի աղն ու լույսը շատանալ, քանի դեռ մեր կողքին ապրում են Արինայի պես գթառատ ու բաջ, անձնագոհ ու առաքինի մարդիկ:
– Միբեկի Արինա, քա այս քայլով դու բարձրագրեցիր քո փոքրիկ երկրի անունը, քա ազգի պատիվը և ապացուցեցիր, որ ՄԵՐԸ ազգություն ու սահմաններ չի ձանձառում: